

- Պէլի է:
- Կեցիր բարով փեսաս:
- Երթաբ բարով:
- Կերակուրի կոպասեմ:
- Պիտի գամ:

Յ. ՊԱՐԱՆԵԱՆ („Խիկար“ 1887 մարտ)

ԽԱՀԿՈՆՑՈՒԹԻՒՆ

Խաչկոնցութիւնը մի նոր բառ է, որ ածանց է Խաչկոնց անուննեւ: Համանուն չունի, բայց զրադատութիւն է նշանակում, ինչպէս խաչկոնցն էլ փճարան և խաչկոնցել փճարաներ: Այդ բառի բուն նշանակութիւնն իր գործողութեամբ կարելի է բացատրել: Օրինակ: Օրէս մի քանի տարի առաջ՝ մի պլուզ երիտասարդ, աչքն ու ունքը տեղը, ինձ ծանօթացնել ուզելով իրան, Խասդիւզի ուսումնարանի նախկին տեսուչ Ցուրսունեանի միջնորդութեամբ մօս եկաւ և ասաց թէ ինք իմ թոռն է և իր յարգանքն կը մատուցանէ ինձ իրրւ իր պապունա: Զարմանքս տարաւ, թէ ինչպէս նա իմ թոռն է եղած և ես բնաւ աեղեկութիւն չեմ ունեցած: ԱՄի զարմանաք, ասաց նա ինձ, Մինաս Զերազը ձեր աշակերան է եղած պատմական ուսմանց մէջ, ես էլ նրա աշակերան եմ նոյն ուսմանց մէջ, հետևաբար ձեր թոռն եմ եղած: Մինաս Զերազը երբէք ինձ աշակերան չէ, ասացի այդ կարճալաճ երիտասարդին, ուստի դու իմ թոռն եղած չես լինիլ, հապա ուրիշի, մաքովս ծիծաղեցայ այդ նորաձև ինքնիրան ծանօթացնելու կերպին վրայ ու իմ երեսը շուր տուի:

Հէնց պյտ ձև վարմունքին խաչկոնցութիւն եմ ասում: Բայց պարոն Ցուրսունեան ասաց թէ դա՝ քաջ տիրացու է և մեր ուսումնարանում էլ մանր աղօց ուսուցիչ, սակայն նրա ո՞րաեղացի և ո՞ւմ որդի լինելը չասաց: Ուստի իմ յիշողութեան մէջ նա մաց տիրացու Խաչկեան և պատանեկաց ուսուցիչ: Հիմա եմ իմանում որ Արագիերու

գիւղացու աղայ է եղել նա, որ այն ժամանակ Խաչկեան է եղել կոչւում և այժմ Խաչկոնց

Այս նորաձև ծանօթացումէ մի ամիս յետոյ, պատահեց որ, այն ժամանակուայ Ուսումնական խորհուրդը, ուրու ատենապետն էր Դօկտօր Թիրեաքեան էֆէնտին, ընդհանուր ազգաց պատմութիւն վերնագրով, երկու դըրուածքը զրկեց ինձ, յատուկ յանձնարարութեամբ, որ անաշառ քննութեան ենթարկեմ այդ պատմութեան դասագրքերը:

Ուսումնական խորհուրդի ինձ յանձնարարած գործն խկին և եթ կատարեցի և ահա՝ այս էր իմ քննադատութիւն:

Այդ գրուածքներ, ընդհանուր ազգաց պատմութիւն չեն, հապա վերջին դարերում Եւրոպից տէրութեանց իրար հետ ունեցած բաղաքական և կրօնական պատերազմներու, նոյն Եւրոպական աշխարհներում կատարուած աւերութենական և գրականական իրողութեանց ամենահամառագ յուշարար ծանօթութիւնը: Գործերը խմբագրութիւն չեն, հապա թարգմանութիւն. Թարգմանիչներն էլ մեր նոր լեզուի պատմական ոճին չեն հետևած. հապա բոլորովին բառարանական լեզուի, այսինքն, ոչ գրաքար են գրած և ոչ աշխարհաբար և մատղաշ ուսանողներուն համար անընդ բռնելի: Իսկ յատուկ անուններն ամեն ազգերուն էլ Փրանսերէն արտաբերութեամբ են ընդունած, այնպէս որ Անգլիացոց, Գերմանացոց, Սպանիացոց և Խոտանացոց պատմական մեծանունները ամենին էլ Փրանսերէն են և ոչ ամեն ազգի իր լեզուվը:

«Բացի այդ անյարմարութեանց, մի գլխաւոր բան էլ կայ այդ գործերում, ինչպէս մեր վարժարաններու ամեն պատմական դասագրքերում: Պատմութեան ուսուցիչները և պատմութիւն գրողները կամ թարգմանողները, որոնք ընդհանրապէս Փրանսացոց պատմական դասագրքերէ վեր են՝ առնում, երկու գլխաւոր բան մռանում են. նաև իրանց հայ լինելը, երկրորդ՝ որոնց էլ որ սորվացնում են պատմութիւն՝ նրանց հայ լինելը, հետևաբար փոխանակի երրև հայ պատմաբան տեսնելու և նկատելու պատմական իրողութիւնը և այդ ուղղութեամբ հետևութիւն հանելու, որ հայու սկզբունքին, դրութեան, հայեացքին օգտա-

կար լինի, իրանց են սեպհականտցնում Քրանսայու, բա-
թովիկ կամ բողոքական, կամ բաղաքական և ազգային
հայեացըները և արձագանք ու կրկնաբան են լինում նը-
րանց»:

«Այդպէս չե որ, մեծապատիւ էֆէնտի, եւրոպական
ազգերու ազգային վարժարաններում, պատմութիւն է դասա-
խուոււր Ամեն պատմաբան, պատմութիւնը իր ազգին հո-
գւոյն, հանճարին, ըմբռնողութեան կամ թէ մարդկային
կամ ազգային զգացողութեան համեմատ է աւանդում ու
այնպէս հրահանգում նրան: Պէտք է մեր վարժարաններում
մեր մատղաշ ուսանողներուն, արհեստներու, արուեստա-
գէաներու, գիւտերու և գիւտ անողներու, վաճառականու-
թեան և առևտրական ընկերութեանց պարզ ու հասկանա-
լի կենդանի լեզուով պատմութիւնը դասախոսուէր, փո-
խանակ տէրութենական, աշխարհավարական, ազգավարչա-
կան բարձր իրողութիւնք կցկտուը առանց պատճառաբանու-
թեան և հետեւութեան սորվացնելու, որոնք մեր մատղաշ
աղեքանց միայն յիշողութիւնը ծանրաբեռնելուց ուրիշ ոչ մի
օգուտ չեն տալ: Եւրոպացոց դիւտագիտութեան ուսմունք
մանր տղոց համար չե, հապա չափահաս և զարգացած
պատանիներու, նրանց համար որոնք բաղաքական ծառայու-
թեանց մէջ են մանելու և գիւտանագէտ պիտի լինին: Ասել
ուզում եմ որ բարձր վարժարաններու և երիտասարդներու
համար»:

Ուսումնական խորհուրդը, այդ երկու ընդհանուր
ազգաց պատմութեան դասագրքերը չվաւերացուց, որոցմէ
մին այդ Արաբկերցի երիտասարդ տիրացուին է եղել, որով-
հետև միւնդյն ժամանակ, հոգելոյս տէր Գէորգ Արծրունի
քահանայէ մի նամակ ստացայ, որով խնդրում էր պատկա-
ռելի ծերունին նպաստաւոր բնութիւն անեմ վերև յիշուած
երիտասարդի ընդհանուր ազգաց պատմութեան վերնա-
գրով դասագրքին, որը նրան ապրուստ է եղել լինելու հրա-
տարակելով այս Այդ ժամանակ իմացայ որ, այդ պարոնը
փեսայացու է եղել նոյն քահանայի թոռանը, միւնդյն ժա-
մանակ քահանայացու իր եկեղեցական երգասացութեան
համար, բայց իրը թէ իր այդ առաջին փորձը յաջողու-
թիւն չդանելուն իր փեսայացութեան կամ նշանածութեան

պատիւն էլ կորցնում է և ըստ իրան ես եղած եմ լինում՝
պատճառ նրա այդ ձախորդութեան:

Արդ այժմ որ իսմզ ստորագրութեամբ գրող է եղել
Բիլրակն շաբաթաթերթում¹⁾, այդ Խաչկոնցն առպա-
րեզ է գտել Խաչկոնցելու: Թիֆլիսու «Հրամայ» անուն-
պատուական հանդիսում մի նամակս տեսնելով ճառագրու-
թեան ձեռվ գրուած ու Զիկահօյի կրօնական ժողովին ուղ-
ղուած, իր թէ քննադատել է, լնդհակառակն, ինչպէս ա-
սացի, զրադատութիւն է արել: Օրեւ քսան տարի առաջ
Հրատարակած թուղթս Վարժապետեան ներսէս արքեպիս-
կոպոս պատրիարքին խնդրելով, չէ հաւանած հիմա, ասե-
լով թէ կուլտալ եմ տուել այն ժամանակ իրանց և հի-
միկ էլ իրանց կուլտալ տուածս Ամերիկացոց եմ եղել մոր-
սել տալի և ինք իր պատմական իմաստութիւնը ցոյց տալու
համար, առանց որ և է մի փաստի և ապացուցի բաներ
մաներ է ասած և ինքնիրան կարդացող պրատող ցոյց
տուած իր «Հասկաբաղ» վերնագրով յօդուածում: Վիեննայու
Միհթարեան կրօնաւորներուն գրածները, Եւսեբիոսը, և եւ-
րոպայի պատմաբաններն այնքան կարդացել է եղել,
որ իր փորում է եղել ամփոփել ամենը: Մի խօսքով ինչ
Խաչկոնցելով, ինքնիրան գլուխը ցոյց տալ է տքնած և այդ
ամենը արած է իր ներսում այսքան տարի մլթերած վրէժը
հանելու համար ինձմէ: Վիեննայու կրօնաւորներէ սորված ի-
տալերէն tutti guanti խօսքն էլ է գործածած, առանց իտա-
լերէն մի բառ գիտենալու: Ուրիշ մի շատ ծուարի բա-
ներ է ասած, որոնց մասին խօսելն ամենաին չէ աժում, դրա
նպատակն այն է եղած, որ իր վրէժը լուծէ ինձմէ և ինքն
իրան պատմագէտ ցոյց տայ, որ ուրիշ բան չէ՝ հապա
միայն Խաչկոնցաբարան, այսինքն պատմաբաններու ձախլիկ
կրկնաբանն ու խուլ արձագանգը:

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆՑ

Պօյաճի գիւղ
1899 փետրուար 11.

¹⁾ Տես թիւ 4 յունուար 21. 1899.